

Հայաստանի Առաջարկադիմություն  
Խորհրդային համաշխարհագոյացն

XV

Ո Ռ Ի Վ

ԽՈՐՀԵՑԵՍՍԱԿԱՆԻ ՅԵՎ ԽՈՐԴԵՑԵՍՍԱԿԱՆ  
ԲԱՆՎՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԹՐՈՒ. Ա. Լ. ՄԿՈՄՊՐՈԽՈՎ

# ԴԱԲԱՂԸ

ՅԵՎ

ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՍ

619  
0-58

ԳՅՈՒՂՂՐԱՏ • 1935 • ՅԵՐԵՎԱՆ

8867

30 JUL 2010

2105 JUL 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՆԳՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

619  
U-58

ՄՐՈՑ. Ա. Լ. ԱԿՊՄՈՐԱԽՈՎ

ար.

Դ Ա Բ Ա Զ Է

ՏԵԿ.

ՊԱՅՔԱՐԵ ՆՐԱ ԳԵՄ

3839/  
1003



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային գրադարան  
1935  
ՀԱՅ 2010  
ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային գրադարան  
ՀԱՅ 2010

ՅԵՐԵՎԱՆ

«Կենդանաբաւծության գործը պեսք և իրենց  
ձեռքն առնեն վող կուսակցությունը, մեր  
քոյլոր տեխտառզները՝ կուսակցուկաններն ու  
անկուսակցականները, նկատի ունենալով, վոր  
կենդանաբաւծություն պրոբլեմն այժմ նույն-  
պիսի առաջնահերք պրոբլեմ է, վորպիսի  
յերեկ արդեն հաջողությունը լուծված նացա-  
նատիկային պրոբլեմն եւ»:

Ի. ՍՏԱԼԻՆ

## ԴԱԲԱՂԸ ՎԱՐԱԿԻՉ ՀԵՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Դաբաղը յերկսմբակ անպառնների (լեզվուրավոր  
անասուն, խողեր, վոչխարներ, այծեր և այլն) սուր-վա-  
րակիչ մի հիվանդություն ե, վորը տարածվում է բացա-  
ռիկ արագությամբ՝ ընդգրկելով մի անտեսություն մյուսի  
յետելից: Այս հիվանդության տարածման ճանապարհները  
շատ հաճախ դժվար են լինում յերեան հանել և դա  
խիստ դժվարացնում ե պարզաբը նրա դեմ:

Դաբաղը մի քամի ալլ վարակիչ հիվանդություններից  
տարբերվում է թեև նրանով, վոր մահացության մեծ  
տուկոս չի առաջացնում, սակայն, այնուամենախնիվ, տըն-  
տեսության հսկայական վնասներ ե պատճառում: Դաբաղը  
խիստ իջեցնում է կաթնարտադրությունը և հաճախ շատ  
յերկար ժամանակով: Դաբաղը պակասեցնում ե մսատու  
անասունի մաքուր քաշը: Դաբաղով հիվանդանալուց ու  
լավանալուց հետո մնում են ծանր հետևանքներ (սրտի  
արատ, կուրծի դժվար բուժվող հիվանդություններ, վեր-  
ջավորությունների հիվանդությունների ամեն տեսակ բար-  
դություններ և այլն): Նա առաջացնում ե նաև մատղաշ-  
ների մահացության մեծ տուկոս: Հիվանդ անասունի բուժ-  
ման, ախտահանման, հատուկ խնամքի ծախսերն ավելա-  
նում են:

Պատ իմբագիք՝ Հ. Մարշանյան  
Տել. խմբագիք՝ Հ. Մուրադյան  
Լեզվ. խմբագիք՝ Արք. Գրիգորյան  
Սբրագիչ՝ Դար. Հակոբյան

Քլավիսի լիազոր Ռ—425, հրատ. № 277 պատվեր № 660 տիրաժ 3000  
Հանձնվել ե արտադրության 1935 հոկտեմբերի 16-ին  
Ստորագրվել ե առաջնորդություն 1935 թ. նոյեմբերի 22-ին

Դրագիքատի տպարտն, Յերևան, Նալբանդյան 11

Յեթե դաբաղի ժամանակ յուրաքանչյուր առանձին կլսի բոլոր վնասները հաշվելու լինենք, կտեսնենք, վոր միջին հաշվով կազմում է 10—20 ոռորի՝ չհաշված իհարկե անտեսության այն վնասները, վորոնք առաջանում են ձեռարկած կարանտինային միջոցառությունների հետևանքով։ Այս գեպքում՝ այդ գումարը կավելանար դեռ յերկու-յերեք անգամ են:

Դաբաղը մեր պայմաններում ամենալուրջ խոչընդունել հանդիսանում այնպիսի կարևորագույն քաղաքական-տնտեսական կամպանիաներ անցկացնելուն, ինչպես սերմանման և բերքահավաքի կամպանիաները, մանավանդ այն տեղերում, վորաեղ խոշոր յեղջյուրավոր անասունն ովտագործվում ե վորպես բանող և քաշող ուժ։ Դաբաղի համաձարակի ժամանակ բոլորովին դադարեցվում ե անասունների բեղմանափորումը։

Դաբաղի ժամանակ կարանտինային միջոցառությունների կիրառումը կաված ե այնպիսի սահմանափակումների հետ, վորոնք ծանր են անդբարդառնում կոլտնտեսությունների և խորհանտեսությունների տնտեսական-ֆինանսական պլանների կատարման վրա։

Վերջապես, դաբաղը խիստ լուրջ վտանդ ե հանդիսանում նաև մարդու համար։ Յերեխաները դաբաղով հիվանդանալու դեպքում՝ շատ հաճախ մահանում են։

Նշված խնդիրները պարտավորեցնում են մեզ, վորպեսզի դադարենք դաբաղի վրա նայել, վորպես մի «անժխաս» հիվանդության, վորպես մի «յերկրորդական» նշանակություն ունեցող հիվանդության վրա։

## ՎԱՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԳԱԲԱՂՈՎ

Դաբաղով ամենից ավելի հեշտությամբ վարակվում են խոշոր յեղջյուրավոր անասունները, խողերը, այծերն ու վոչխարները։ Դաբաղով մի քիչ պակաս ունակ են հիվանդանալու հյուսիսային յեղջերուներն ու ուղտերը։

Խոշոր յեղջյուրավոր անասուններն ու խողերը, ինչպես դա այժմ հաստատված ե, դաբաղից ամենից ավելի շատ հիվանդացող կենդանիներն են։

Զիերը, ջորիներն ու եշերը, ինչպես նաև թռչունները բոլորովին չեն հիվանդանում դաբաղով։ Նրանց չի հաջողված վարակել նույնիսկ արհեստական ճանապարհով։ Շներն ու կատուները բնական պայմաններում դաբաղով կարող են հիվանդանալ վորպես հազվադեպ բացառություն։ բավական հեշտությամբ հաջողված ե նրանց հիվանդացներ արհեստական վարակման միջոցով։

Լաբորատորիաներում դաբաղի ուսումնասիրման ժամանակ ոգտվում են խողուկները, վորոնք արհեստական վարակման միջոցով հեշտությամբ վարակվում են դաբաղով և հիվանդանում ու առողջանում են միենույն նշանակություն, ինչպես խոշոր յեղջյուրավոր անասունները։ Դաբաղով կարելի յեղջյուրավոր անասուններին, գետնասկզբունքներին, սպիտակ և դաշտային մկներին ու առնետներին։ Դաբաղով վարակվում ու հիվանդանում են բազմաթիվ վայրի անասուններ՝ լեռնայծը, լաման, ընձուղտը և այլն։

## ԴԱԲԱՂԻ ՀԱՐՈՒՑԻՉՔ

Վարակիչ հիվանդությունները՝ թե մարդկանց և թե անասունների մեջ առաջանում են հատուկ հիվանդաբեր (ախտածին) մանրեներից։ Բոլոր այս մանրեներն այնքան փոքր են, վոր նրանց կարելի յեղջերուներների մեծացնող ապակիների մի բարդ սիստեմի՝ մանրադիտակի ոգնությամբ։ Մի քանի մանրեներ մանրադիտակի միջոցով կարելի յեղջերուների 1000 անգամ կամ ավելի մեծացնելու ժամանակ։

Սակայն կա վարակիչ հիվանդությունների հարուցիչների մի ուրիշ խումբ, վորը նույնիսկ չի կարելի տեսնել

արդքան մեծացնելու միջոցով։ Դրանք այսպես կոչված քամվող վարակներն (վիրուս) են, վորոնք չափազանց շատ են տարածված բնության մեջ, վոչ միայն անառուների, այլև մանավանդ բուլսերի միջև։

Գիտության մեջ մինչև այժմ վերջնականապես չելուծված այն հարցը, թե ինչպես ե այդ հարուցիչների ստույգ բնությունը։ Քամվող վիրուսների խմբից այդպիսի հարուցիչների թվին ե պատկանում նաև դարադի հարուցիչը։

Չնայած նրան, վոր դարադի հարուցիչը գիտության կողմից չի գտնված, այնուամենայնիվ նրա առանձնահատկությունները բավական լավ ուսումնասիրված են։

Ներկալումս գիտությունը հաստատել ե դարադի հարուցիչի յերեք միանդամայն ինքնուրուցն տիպի գոյությունը, Այդ յերեք տիպից լուրաքանչյուրը, վորոնք նշանակվում են «Օ», «Ա» և «Ը» տառերով, կարող ե առաջացնել անառունների՝ կլինիկական նշաններով կատարելապես միանման՝ դարադ հիվանդություն։

Դարադով հիվանդացած ու լավացած բոլոր անառունները բավական յերկար ժամանակ, սովորաբար 6—9 ամիս և հաճախ նույնիսկ յերկու տարի դարադի նկատմամբ ձեռք են բերում խունիտեա, հարուցիչի միայն այն տիպի վերաբերյալ, վորն առաջացրել ե դարադ հիվանդությունը։ Հետևաբար, մեկ տիպի հարուցիչը դարադով հիվանդացած ու լավացած անառունի դիմացկունություն չի առաջանում մյուս տիպի հանդեպ։ Դարադի հարուցիչի մի քանի տիպերի առկայության զեպքում դդայուն անառունները կարող են հիվանդանալ իրար յետեվից մի քանի անգամ։ Դարադի հարուցիչի յերեք տիպից ամենաշատ տարածված ե «Օ» տիպի հարուցիչը։ Դարադի հարուցիչների այս յերեք տիպից բացի, գոյություն ունեն գեռ բազմաթիվ «միջանկալ տիպեր» (վարիանտներ), վորոնց ծագումը գիտության կողմից գեռն բավարար չափով չի ուսումնասիրված։

Դարադի հարուցիչի յերեք տիպի և բազմաթիվ վարիանտների (միջանկալ տիպերի) գոյությունը դարադի դեմ մղվող պարաբր դարձնում են իստ դժվարին։

Խորհրդային Միության տերիտորիայի վրա մինչև վերջին ժամանակները դարադի հարուցիչը նույնպես «Օ» տիպն ե համարվում, սակայն հետագայում ևս այլ տիպերի հայտաբերման կարելությունը չի բացառված։

Դարադի հարուցիչի (դարադի վարակի) յերկրորդ առանձնահատկությունը՝ դա նրա արտակարգ բարձր գիմացկունությունն ե ամեն տեսակի արտաքին ներգործությունների հանդեպ։ Այսպես՝ ապացուցված ե, վոր դարադի վարակը դանդաղ չորացնելու դեպքում՝ պահպանվում ե մինչև վեց ամիս։

Ուժեղ սանհամանիքները դարադի վարակի վրա գրեթե բոլորպին չեն ազդում, մինչև 36 տատիճան սառնամանիքի ժամանակ դարադի վարակը մի պմակա ընթացքում չի վաշընչանում ե, նույնիսկ 48 տատիճան սառնամանիքի ժամանակ, պահպանվում ե 8 ժամ։

Մորթված և մորթելուց անմիջապես հետո սառեցրած անառունի մսի մեջ դարադի վարակը կարող է պահպանվել յերկու մինչև 30—40 որ և վուկրածուծի մեջ՝ մինչև 97 վել մինչև 30—40 որ և վուկրածուծի մեջ՝ մինչև 97 վել մինչև 30—40 որ և վուկրածուծի մասերում (բերանի խոռոչում, վերջավորություններում)՝ մինչև 112 որ։ Աղած յուղի մեջ նա մինչև 14 որ չի վոչնչանում։ Ալլուրի և թեփերի մեջ դարադի վարակը կարող է մինչև յերկու ամիս պահպանվել։ Խոտի մեջ պահպանվել ե մինչև 5 ամիս։ Ալլուրի մեջ պահպանվել յերեք մինչև 43 որ։ Գոմաղը հեղուկի մեջ և գոմերի մեջ՝ մինչև 30 որ, իսկ չոր գոմաղը վարակը չի վոչնչացել մինչև 6—9 որ, իսկ չոր գոմաղը վարակը մինչև 30 որ, իսկ չոր գոմաղը մինչև 43 որ։ Գոմաղը հեղուկի մեջ և գոմերի մեջ ապանդանցների առուների մեջ հոսող ջրերում՝ մինչև 30 որ, իսկ աշունը՝ նույնիսկ մինչև 104 որ։

Դարադի վարակը յերկար ժամանակ կարող է պահպանվել նրա (վարակի) հետ շփման մեջ գանված անառունների բրդի և վերջավորությունների վրա։

Դաբաղի վարակը շուտ ե վոչնչանում բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ: 70 աստիճան ջերմության ժամանակ նա վոչնչանում ե 30 ըոպելից, իսկ յեռացնելու ժամանակ՝ վայրկենապես: Կաթի մեջ 5Շ աստիճանում դաբաղի վարակը վոչնչանում ե 15 ըոպելի լնթացքում:

Արեգակի լույսը նույնապես բավական արագ սպանում ե դաբաղի վիրուսը, թեև դաբաղի բշտիկի պատերի հյուսվածքների մեջ արեգակի լույսի ազդեցության տակ՝ իր ակտիվությունը կարող ե պահպանել մինչև 2 ամիս: Առանց իմանալու դաբաղի վարակի այս առանձնահատկությունները, չի կարելի ճիշտ ձեռնարկումներ կազմակերպել դաբաղի դեմ:

## ՎԱՐԱԿԻ ՄՈՒՏՔԻ ԱՆԱՍՈՒԻՆԻ ՈՐԳԱՆԻՉԾՄԻ ՄԵջ

Առողջ անասունի որգանիզմի մեջ դաբաղի հարուցիչն ամենից հաճախ մուտք ե գործում կերի, ջրի, կաթի (հորթերին ու գոյիներին խմեցնելու ժամանակ) հետ միասին կամ քերծվածքների, ճանկովածքների միջոցով (պձեղների արանքը և պսակը, կուրծի պտուկները), մանավանդ ամառ՝ արոտային պահպանման ժամանակի:

Յերբ վարակը մուտք ե գործում բերանի խոռոչի միջոցով կամ քերծվածքների և ճանկովածքների միջոցով, կիվանդության պրոցեսը՝ բշտիկի ձեռվ՝ սկսում ե ամենից առաջ այդ տեղից, և առաջ դաբաղի վարակն անցնում է արյան մեջ և տարածվում ամբողջ որգանիզմում:

Հիվանդ անասունի որգանիզմի մեջ դաբաղի վարակը դժունում ե գլխավորապես դաբաղի բշտիկների մեջ: Այդ բշտիկները լցված են լինում մի հեղուկով, վորի մեջ ահազին քանակությամբ դաբաղի վարակ և գտնվում: Ավելի շատ քանակությամբ դաբաղի վարակ պարունակում են դաբաղի բշտիկի պատերը:

Հիվանդ անասունի որգանիզմից դաբաղի վարակը

արտաթորվում ե, մանավանդ հիվանդության առաջին որերը թքի (լորձի), մեղի, աղբի և կաթի հետ միասին: Դաբաղի տարածման տեսակետից ամենավանդավորը հիվանդանասունների թուքն ե: Հիվանդության առաջին որերին անասունների պարունակում ե ահազին քանակությամբ դաբաղի վարակ, իսկ ամենից ավելի ակտիվ ձեռվ՝ մինչև 5—6-րդ որը, բայց 13-րդ որից վոչ ավելի:

Մեզի և աղբի մեջ դաբաղի վարակի առկայությունը հաջողվեց ապացուցել նույնպես հիվանդության միայն առաջին որերը, բայց 4—5 որից վոչ ավելի: Կաթի մեջ դաբաղի վարակի ներկայությունն ապացուցված է հիվանդության հենց սկզբում:

Վերջերս ապացուցվել ե նաև, վոր դաբաղից առաջացած անասունները յերկար ժամանակով մնում են վարակ կրողներ, այսինքն՝ առողջ լինելով հանդերձ, նրանք կարող են վարակ արտաթորել և դրանով ել դաբաղի տարածման աղբյուր հանդիսանալ:

Գործնական առանձին գիտողություններ կան, յերբ դաբաղից լավացած անասունները հիվանդությունից միքանի ամիս հետո դաբաղ հիվանդության բռնկման պատճառ են յեղել:

## ԳԱԲԱԼԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Դաբաղի տարածման ամենազլիսավոր աղբյուրն ե հանդիսանում ամենից առաջ հիվանդ անասունը: Նա հիվանդանալու պրոցեսում նախ կարծես թե իր մեջ կուտակում ե դաբաղի վարակը, և առաջ ահազին քանակությամբ, մասնավանդ հիվանդության առաջին որերին, արտաթորում ե այն և հետևաբար ուրիշ առողջ անասունների վարակման աղբյուր ե հանդիսանապես ամեն տեղ, վորտեղ ընկնում են հիվանդ անասունի դաբաղի վարակ պարունակող արտաթորումները (լորձ, մեղ, աղբ, կաթ),

ինի դա գոմում, թե արոտավայրում, դաբաղի վարակը կարող ե շատ յերկար ժամանակ յերեմն ամբողջ ամիսներ պահպանվել և պատճառ հանդիսանալ դաբաղի նոր բոնկումների: Անասունների արոտային պահպանման ժամանակ դաբաղը տարածվում ե մեծ արագությամբ: Նախը մեջ, մի անասունի մյուսի հետ մշտական շփման շնորհիվ, մի հիվանդ անասունի հայտնվելու ամբողջ նախրի արագ կերպով վարակվելուն պատճառ ե դաւնում: Նախրից հիվանդ անասունի մեկուսացման ձանապարհով յերեմն չի հաջողվում հիվանդության զարգացումը կասեցնել: Անխուսափելիորեն զարազով հիվանդանում ե ամբողջ նախրը: Սրածացնելու ժամանակ նախրի մեջ դաբաղի արագ տարածման նվաստում են նաև դաբաղի վարակով կեղտոտված (վարակված) արոտավայրերն ու ջրարեները:

Զմեռը՝ մսուրային պահպանման ժամանակ՝ դաբաղը տարածվում ե մի քիչ ավելի դանդաղ, բայց նրա գեմ պայքարը քիչ դժվարություն չի ներկայացնում, քան ամրանը:

Զմրանը՝ առանձին տարիներում նկատվել են դաբաղի համաճարակներ, վորոնք ընդգրկել են ամբողջ շրջաններ: Հետեւաբար, տարվա յեղանակը դաբաղի տարածման համար առանձին նշանակություն չունի:

Տաբաղից լավացած անասուններին դաբաղից ապառվ շրջանները հարկադրաբար տեղափոխելու դեպքում՝ պետք ե միշտ հիշել, վոր կարող են լինել յերկարատև վարակ կը բերելու առանձին զեպքեր: Դաբաղի վարակը կարող ե, ինչպես արդեն նախապես ասված եր, յերկար ժամանակ պահպանվել անասնաբակերի շինությունների մեջ, ինչպես նաև անասունների բրդի, սմբակների վրա: այդպիսի դեպքերում՝ անասունները կարող են պարզապես դաբաղի վարակը մեխանիկորեն փոխանցողներ հանդիսանալ: Մյու պատճառով ել դաբաղից լավացած անասուններ:

Երի ամեն մի տեղափոխությունը, դաբաղից ապահով շրջանները կապված ե մեծ վտանգի հետ: Դրա հետ մեկտեղ պետք ե նկատի ունենալ, վոր դաբաղի ժամանակ վարակ կը ելու տեղողությունը մինչև այժմ դեռևս բոլորովին անբավարար ե ուսումնասիրված:

Դաբաղի տարածման գործում մեծ նշանակություն ունեն բոլոր տեսակի միջնորդներն ու փոխանցողները: Ամենից առաջ իրենք՝ մարդիկ, մանավանդ անասուններն անամողները հանդիսանում են դաբաղի այդպիսի միջնորդներ ու փոխանցողներ: Դաբաղով հիվանդ անասուններին խնամելու ժամանակ, անհրաժեշտ զգուշությունը չպահպանելու դեպքում՝ դաբաղի վարակը շատ հեշտ ե տեղափոխվում վոտնամանի, հագուստի, ձեռքերի և զանազան այն առարկաների վրա, վորոնք գործ են ածվում անասունների խնամքի ու պահպանման ժամանակ (դույլեր, թիեր, ավելներ, խոզանակներ և այլն): Դաբաղը մի տնտեսությունից մյուսը կարող է փոխանցվել վոչ զգայուն անասունների կողմից, վորոնք իրենք չեն հիվանդանում, բայց իրենց վրա կարող են փոխանցել դաբաղի վարակը: Այդ կարող է տեղի ունենալ դաբաղից անապահով տնտեսություններից ձիերն ոգտագործելու ժամանակ: Դաբաղը կարող է տարածվել ցամքարի, գոմաղբի, աղբանեղուկի և ընդհանրապես անասնաբակերից հոսող հեղուկների, մսուրի, ընդհանուր արուավայրի և ջրարբի միջոցով:

Դաբաղի վարակը հեշտությամբ կարելի յէ փոխադրել կերերի հետ միասին, յեթե դրանց հետ շփման մեջ են գտնվել դաբաղով հիվանդ անասունները:

Անցյալ տարիների պրակտիկայից հայտնի յին առանձին դեպքեր, յերբ Կազակստանից, Սիբիրից և Ռւսալից կենտրոնական շրջանները բերվող խոտը դաբաղ հիվանդության տարածման պատճառ ե լիզել:

Դաբաղը մի շրջանից մյուսը կարող ե բերվել դաբաղից անապահով վայրերում մթերված կաշվեհունութիւնի միջու

ցով։ Յերկաթուղային և ջրային արանսպորտը, բեռնա-  
քարձման յերկաթուղային կայաններն ու հրապարակները,  
ինչպես նաև անսառունների տեղափոխման ճանապարհները  
դարբադման աղբյուր կարող են հանդիսանալ, յե-  
թե նրանք ապահովված չեն պատշաճ անասնաբուժական  
հսկողությամբ։

Նախահեղափոխական Ռուսաստանում, իսկ կապիտա-  
տալիստական յերկրներում ներկայումս ել, դարբադի տա-  
րածման գործում հիմնական գեր ե խաղում շուկաները,  
տոնավաճառները և ընդհանրապես անասունների ու ա-  
նասնապահական արտադրանքների առեվտուրը։

Անասունների մասսայական կուտակումը մթերման  
վայրերում և անկանոն տեղափոխումն արդյունաբերական  
կենտրոնները, անասնահումուզիթի անսպանային մթերում-  
ները, սանիտարական-առողջապահական տեսակետից վատ  
սարքված սպանդանոցները, սալցարանները, անասնահու-  
մուզիթի (կաշի, ըուրդ, սմբակ, յեղջուրներ) մշակման գոր-  
ծարանները, կաթի գործարանների և պանրագործարան-  
ների հակասանիտարական դրությունը դարբադի համաձա-  
րակների պատճառ են յեղել խորհրդային շինարարության  
առաջին տարիներին։

Յեվ գրությունը սուր կերպով փոխվեց, հենց վոր  
խորհնատնտեսություններն ու կոլտնտեսություններն ամբո-  
վնդվեցին անտեսապես-կաղմակերպչորեն։ Վերացվեցին ա-  
նասունների և անասնահումուզիթի անսպանային մթերում-  
ները, աճեց սեփական խորհրդային մսա-կաթնալին ար-  
դյունաբերությունը (տեխնիկական և անասնաբուժա-սա-  
նիտարական պահանջների համաձայն կառուցված մսի կոմ-  
բինատները, կաթի գործարանները, պանրագործարանները  
և այլն)։

## ԴԱԲԱԳԻ ՆՇԱՆԵՐԻ

Բոլոր վարակիչ հիվանդությունների ժամանակ, վոր-  
պես ընդհանուր կանոն, տեսանելի (կլինիկական) նշաննե-  
րը հայտնվում են վարակումից վոչ անմիջապես հետո:  
Նախ անցնում ե հիվանդության մի վորոշ գաղտնի (ին-  
կուբացիոն) շրջանը։ Այդ ժամանակ դեռ չի կարելի վորո-  
շել, անասունը հիվանդ ե թե առողջ։ Այս դադանի շրջա-  
նի տևողությունը տարբեր վարակիչ հիվանդությաւնների  
համար յուրաքանչյուր առանձին անասունի մոտ միևնույն  
հիվանդության գեպքում միատեսակ չի լինում։

Համաձարակի ձեռվ ընթացող (արագ կերպով մի ամ-  
բողջ տեղամաս ընդգրկող) սուր-վարակիչ հիվանդություն-  
ների գաղտնի շրջանը միշտ համեմատաբար կարճ ե և  
տևում ե ընդամենը մի քանի որ՝ սովորաբար 10—14  
որից վոչ ավելի։ Խրոնիկ (գանգաղ ընթացող) վարակիչ  
հիվանդությունների գաղտնի շրջանը, ընդհակառակը, յեր-  
կար ե տևում՝ յերբեմն ամբողջ ամիսներ։

Խոշոր յեղջյուրավոր անասունի մոտ դարբադի դադանի  
շրջանի տևողությունը կարող է լինել 16 ժամից մինչև  
5—6 որ և, միայն շատ հազվագյուտ դեպքերում, կարող է  
մինչև 12—14 որ տևել ։ Խոզերի մոտ հիվանդության  
գաղտնի շրջանը տևում ե սովորաբար մի քիչ յերկար,  
այսինքն՝ 36 ժամից մինչև 8 որ։ Մոտավորապես այդքան-  
ե տևում նաև վոչխարների ու ալծերի մոտ։

Տարբեր տեսակի անասունների դարբադի հիվանդու-  
թյան նշանները նույնպես միատեսակ չեն լինում։

Դարբադն ավելի տիպիկ (կլասիկ) ձեռվ արտահայտ-  
վում ե այն խոշոր յեղջյուրավոր անասունի մոտ, վորը դա-  
բադի հանդեպ ավելի զգալիուն եւ։

Բոլոր անասունների դարբադի հիվանդության ամենա-  
առաջին նշաններից մեկն ե հանդիսանում դարբադի վարա-  
կի մուտք գործած տեղում սկզբնական դարբադին բշտիկի

զարգացումը: Հիվանդության այս շրջանը պրակտիկայում սովորաբար մնում է աննկատելի և չի հայտաբերվում: Այս ժամանակ անասունի վրա հիվանդության վոչ մի ալլ նկատելի նշան չի լինում և դրա համար ել չի նկատվում: Սկզբնական բշտիկները կարող են հայտաբերվել կամ բերանի խոռոչում, կամ պճեղների արանքում ու պսակի վրա, կամ կուրծի պտուկների վրա, նայած թե վորտեղ և մուտք գործել դարադի վարակը: Սկզբնական բշտիկի զարգացումից հետո դարադի վարակն անցնում է տրյան մեջ և տարածվում է ամբողջ մարմնում, վորի հետևանքով ապա զարգանում են յերկրորդական բշտիկներ: Այս ժամանակ անասունի ջերմությունը միանդամից բարձրանում է մինչև  $40-41$  աստիճանի: Միաժամանակ լիրեվան են դալիս հիվանդության այլ տեսանելի նշանները, փորոնք ցույց են տալիս հիվանդ անասունի ամբողջ որդանիքմի ընդհանուր խանդարումը: անասունը հրաժարվում է կերից, չի խմում, չի ուտում, վորոճումը տեղի է ունենում դանդաղ կամ բոլորովին բացակայում է, իսկ բերանը միշտ փակ է պահում: Բերանը բանալու ժամանակ ստացվում է մի յուրատեսակ ծպծպացնող ձայն, իսկ բերանից շարունակ յերկար թելի նման կախվում է բավական թանձր և փրփրոս լորձ: Բերանի խոռոչում (շըրթունքների, լեզվի և լնդերի վրա), միաժամանակ վերջավորությունների (պճեղների արանքը և պսակը) և կուրծի պտուկների վրա հիվանդության զարգացման այս շրջանում հայտնվում են յերկրորդական (բազմաթիվ) բշտիկներ, փորոնք շատ շուտ պատռվում են, իսկ նրանց տեղում խոցեր են մնում: Այդպիսի բշտիկներ մեր կողմից նկատվել են նաև խոշոր յեղջյուրավոր անասունի ստամոքսում (թափանում):

Յերկրորդական բշտիկների հայտնվելու հետ միաժամանակ, ջերմությունն արագ կերպով ընկնում է, իսկ

սկզբնական բշտիկներն այդ ժամանակի արդեն պատռվում են, նրանց տեղում մնում են վոչ խորը խիստ ջրոտվող խոցեր: Ջերմությունը գրանից հետո սովորաբար այլևս չի բարձրանում, յեթե հիվանդությունն ընթանում է առանց վորի հետազո բարդությունների: Դարադի բշտիկների պատռվելուց հետո գոյացած խոցերն սկսում են շուտով լավանալ և  $6-8$  որից հետո նրանց տեղը մնուն են մի-



Նկ. 1. Լոգիերի և բջաթերի բշտիկներ և ախտ (յազգա)

այն վերքերի հազիվ նկատելի հետքերը: Յերբ հիվանդությունը բարեհաջող ընթացք ունի, այդ ամբողջ պրոցեսը սովորաբար վերջանում է յերկու-լերեք շաբաթվա ընթացքում և անասունն առողջանում է, յեթե իհարկե վորենե բարդություններ չլինեն: Այնուամենայնիվ դարագը շատ հազվագեց և անցնում առանց վերջավորությունների ու կուրծի վրա բարդություններ առաջացնելու և առանց սրբի գործունեյության խանդարման:

Հիվանդությունը խոշոր յեղջյուրավոր անասունի ստամբուն անցնելու դեպքում՝ առաջանում են ստամբուազիքային ծանր խանգարումներ։ Վերջավորությունների վարակվելու ժամանակ, պձեղների արանքում և պձեղների պսակի շուրջը գոյացած խոցերը լավ խնամքի ու կանոնավոր բուժման դեպքում՝ շուտով լավանում են, իսկ հակառակ դեպքում գործը վերջանում ե դժվար բուժվող թարախակույտերով։


Դարադից հետո վերջավորությունների վրա առաջացած բարդությունների հետևանքով, յերեմն պձեղն ընկնում ե, յեթե հիվանդությունն անուշադիր ե թողված։

Այն դեպքերում, յերբ վերջավորություններն ուժեղ են վարակվում և հիվանդ անասունը հարկադրված ե մեծ մասամբ պառկել յերեմն մարմնի վրա առաջանում են խոցեր, անասունը հյուծվում ե և մահանում։ Յերբ վարակված ե կուրծը, դաբաղի բշտիկները հալոնվում են պտուկների վրա։ Կթելու ժամանակ նրանք սովորաբար խկույն պատովում են։ Նրանց տեղը մնացած խոցերը շատ շուտով լավանում են։ Պատահում ե, վոր կուրծը դաբաղվ վարակվելու հետեանքով, սաստիկ ուռչում ե և գործը կարող է վերջանալ դժվար բուժվող բարդություններով։ Դարադով հիվանդանալու ժամանակ կաթի քանակը խիստ նվազում ե և այս յերեսույթը տեղի է ունենում նաև առանց կուրծի հիվանդության։ Կաթի բաղադրությունը փոխվում է, դառնում է լորձանման և դառնահամ, իսկ յերեմն ել դառնում է բոլորովին թափանցիկ, ջրանման և նրա մեջ լողում են փաթիլներ։ Յերեմն այդ փաթիլները ծածկում են պտուկների խողովակիկներն ու կթելը դժվարացնում։

Խոշոր յեղջյուրավոր անասունի դաբաղը լիակատար կերպով առողջանում ե յերկու-յերեք շաբաթված ընթաց-

քում, և հազվագյուտ դեպքերում՝ հիվանդությունը ձգձրգվում է ավելի լերկար։

Խոշոր յեղջյուրավոր անասունի դաբաղը սովորաբար ընթանում է լավորակ ձեռվ և առանձին մեծ կորուստներ




Նկ. 2 Կռվի ստամոքսի վնասվածքներ՝ դաբաղից

(մահացության իմաստով) չի առաջացնում։ ԽՍՀՄ-ում ալդ մահացությունը, միջին հաշվով, կազմում է 0,2—0,3 տոկոսից վոչ ավելի և ընդհակառակը, դաբաղի չարորակ ընթացքի ժամանակ՝ մահացությունը կարող է բարձրանալ մինչև  $30^{\circ}$ -ի և ավելի, ինչպես նկատվում է յերեմն նաև ուրիշ յերկրներում։

Խոզերը դաբաղով հիվանդանում են ընդհանուր առմամբ ախտես, ինչպես խոշոր յեղջյուրավոր անասունները։ Դարադով ամենից ավելի ծանր են հիվանդանում մատղաշներն ու շափազանց գիրացրած խոզերը։ Միջին հաստիկ



իսոզերը լինուած են ավելի դիմացկուն։ Գիրացրած խողերի և մատղաշների մեջ շատ հաճախ նկատվում են հանկարծակի սատկելու դեպքեր՝ սրտի կաթվածի հետևանքով։ Ժանտախտի դեմ սիմուլտան լեզանակով պատվաստված (միաժամանակ շիճուկով և վարակով պատվաստում) և գրանից հետո դեռ վոչ լիակատար կերպով առողջացնած խոզերը, լերը դաբաղով հիվանդանում են, տալիս են կոռըստի խիստ բարձր տոկոս (60—80 տոկոս)։ Ամեն տեսակի բարդությունների բացակայության դեպքում խոզերն ընդհանուր առմամբ հիվանդանում են բավական թեթև և



Նկ. 3. Խօզի դարսագ

10—14 որվա ընթացքում առողջանում են։ Հետագալում կարող են ոգտագործվել իբրև մսացու՝ գիրացնելու համար։

Վոչխարները դաբաղով հիվանդանում են գրեթե միշտ պճեղների վարակումից։ Առաջները կարծում եյին, վոր վոչխարների դաբաղը լինում ե բացառապես պճղային ձեզով։ Դա բոլորովին այդպես չե, վոչխարների դաբաղն ընթանում ե այսպես, ինչպես և մյուս անասունների մոտ, յերկու շրջանի ձեզով, այսինքն՝ սկզբնական և լերկրորդական ըշտիկների առաջացումով։ Դաբաղի առաջացրած փոփոխությունները վոչխարի բերանի խոռոչում այնքան քիչ

նկատելի յեն, վոր հեշտությամբ կարող են աննկատելի մնալ։ Դաբաղի ժամանակ վոչխարների բերանից լորձ չի հոսում, և զրա համար ել ընդունված ե կարծել, վոր վոչխարների բերանի խոռոչը դաբաղի ժամանակ չի վարակվում։

Վոչխարների դաբաղը սովորաբար ընթանում ե լավորակ ձեզով և նրանք հիվանդանալուց հետո 6—10-րդ որն առողջանում են։

Դաբաղի հանգեց մեծ զգայնությամբ աչքի լին ընկնում մատղաշները, նորթերն ու գոջիները։ Նրանց մոտ հիվանդությունն ընթանում է խիստ ծանր և հաճախ վերջանում ե մահացումով։ Մատղաշների դաբաղ հիվանդության զուգադիպում են ստամոքսա-աղիքային խանգարումներ՝ փորլուծի ձեզով։ Հիվանդ անասունների ախորժակը կորչում ե, ջերմությունը բարձրանում ե, լերկու-լերեք որից հիվանդությունը վերջանում ե մահով՝ սովորաբար սրտի կաթվածից։

Դաբաղից մահացությունը մատղաշների մեջ՝ մանականդ բարձր կուլտուրական ցեղերի անասուններից՝ յերեմմ համար է մինչև 80—100 տոկոսի։

Զարորակ դաբաղի ժամանակ խոշոր յեղջյուրավոր անասունի մոտ հիվանդությունը նախ լինում է սովորական ձեզով, այսինքն՝ այսպես, ինչպես միշտ, ապա անասունն իբր թե բոլորովին առողջանում ե, բայց հանկարծ նորից անակնկալ կերպով հիվանդանում ե, բարձրանում ե ջերմությունը՝ առաջանում ե ընկճված վիճակ և անասունը շուտով՝ զրանից հետո 2—3-րդ որը՝ սատկում ե սրտի կտթվածից։

Դաբաղը բոլոր նրա հանգեց զգայուն անասունների մոտ հիվանդության այնպիսի առանձնահատուկ նշաններ ե առաջացնում, վոր այն վորոշել կարելի լի միախ տեսանելի նշանների հիման վրա։

Այս բոլոր հիվանդություններից, վորոնց հետ ամենից ավելի հեշտ և շփոթել դաբաղը, կարելի յե ցուց տալ միայն բերանի խոռոչի վարակիչ բշտիկային բորբոքումը (վարակիչ բշտիկային բերնատապ): Դա դաբաղից տարբերվում է նրանով, վոր վարակում է վոչ միայն յերկուրմբակ անասուններին (խոշոր յեղջյուրավոր անասուններ, խոզեր, վոչխարներ և այլն), այլ նաև ձիերին:

Խոզերի դաբաղը կարելի յե շփոթել բշտացանի (բշտիկային եկզանտիմայի) հետ, վորը վերջին տարիներս բավական լայն չափով տարածվել է ուրիշ յերկրներում: Այդպիսի հիվանդություն մի քանի տարի առաջ՝ նկատվել է նաև մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում: Այս հիվանդությունը խոզերի մոտ ընթանում է զգալիորեն թեթև, քան թե դաբաղը, և մեծ կորուստներ չի պատճառում: Այս հիվանդությունը, վորը շատ քիչ և ուսումնասիրված, տարբերվում է նրանով, վոր դաբաղը զրեթե միշտ վարակում է միանգամից դաբաղի հանդեպ զգայուն բոլոր տեսակի անասունները և չի սահմանափակվում միայն խոզերով:

## ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱԲԱՂԻ ԴԵՄ

Դաբաղի դեմ պայքարելը մեծ դժվարություններ և ներկայացնում: Անհրաժեշտ են ամենաարագ և կրուկ միջոցներ, քանի դեռ նա լայն ծագալ չի ստացել: Միայն այսպիսի դեպքերում հաջողվում է դաբաղը շատ արագ վերացնել:

Դաբաղ կամ իր նշաններով դաբաղին նման հիվանդություն յերեան գալու դեպքում անմիջապես պետք է հայտնել անասնաբուժին կամ անասնաբուժակին: Մինչև նրա գալը չի կարելի բակից դուրս թողնել յեղջյուրավոր անասուններ, խոզեր, վոչխարներ. չպետք է գործածել հում կաթ և հում կաթնամթերք մարդկանց՝ իրրե ուտելիքի և անասուններին՝ իրրե կեր:

Հիվանդության մասին տեղեկություն ստանալուն պես անասնաբուժը կամ անասնաբուժակին անմիջապես մեկնուելու այնտեղ՝ վորոշելու հիվանդությունը և անհրաժեշտ միմ ջոցները ձեռք տոնելու:

Դաբաղի դեմ պայքարի առաջին և հիմնական միջոցը՝ դու ամենախիստ կարանիքն է (բոլորի համար պարտադիր սահմանափակիչ միջոցառությունը): Դաբաղի ժամանակ անհրաժեշտ է լինում մեկուսացնել և կարանտինի յենթարկել (առանձին պահպանում) ամբողջ նախիրը, առանց նկատի առնելու նրա մեջ հայտաբերված հիվանդ անասունների քանակը: Նախրից առանձին հիվանդներին առանձնացնելն ու նրանց մեկեռուսացնելը, ինչպես դա արգում է բազմաթիվ ուրիշ վարակիչ հիվանդությունների ժամանակ, չի կարող պահպանել մնացած անասուններին դաբաղից:

Խորհութեասություններում և կոլտնտեսություններում, վորտեղ կան առանձին, իրարից վորոշ հեռավորության վրա գտնվող ֆերմաներ (ԿԱՖ, ԽԱՓ), դաբաղը կարելի յե վերացնել առանձին ֆերմաները մեկուսացնելու և կարանտինի յենթարկելու միջոցով:

Ամառ ժամանակ պետք է հանձնաբարել արոտային կարանտին\* ) անասունների դաբաղով հիվանդանալուամբողջ ժամանակաշրջանի համար, ամրացնելով այդ գործի համար հովիվներ, վորոշ արոտավայր և ջրարր:

Տնտեսության մեջ դաբաղ յերեան գալու դեպքում արդ տնտեսությունը հայտարարվում է դաբաղից անսպահով: Ամբողջ անտեսությունը յենթարկվում է ամենախիստ կարանտինի, վորը բոլորի համար պարտադիր և ամենախիստ

\* ) Դաբաղի ժամանակ արոտավայրում միջոցառություն կաղմակերպելու և առանվազապես արոտային կարանտին կիրառելու դեպքում՝ շատ բան կախված կինքի իրեն՝ հօգիր կարգապահությունից և շահագրգռվածությունից: Այդպիսի դեպքերում հասնելի արդյունք ետակի հովիվների պարկեարժան սրատեմը թե իր նոտիքը դաբաղից պաշտպանելու համար և թե կարանտինային ռեժիմի նշանակած կարառման համար:


միջոցառումների մի սիստեմ ե, վոր նպատակ ունի վերացնելու դարադն անապահով տնտեսության սահմաններում և թույլ չտալու, վոր նա տարածվի կարանտինի սահմաններից դուրս: Դարադից անապահով տնտեսության համար լրիվ կարանտինի տևողությունը սահմանված է 14 օր վերջին հիվանդի առողջանալուց հետո, և 14 օրվա ընթացքում, բացի դրանից, կիրառվում են այն բոլոր սահմանափուլները, վորոնք սահմանված են նախադպուշական (պրոֆիլակտիկ) գոտու համար:

Այդ կարանտինային միջոցառումները կայանում են հետևյալում. արգելվում ե անապահով վայրից ամեն տեսակի տեղափոխում և արտահանում դարադի հանդես զգայուն անասունների, ինչպես նաև ամեն տեսակի փոխադրում՝ հում անասնամթերքի, կոշտ (խոտ, դարման և այլն) և խտացրած (վարսակ, գարի և այլն) կերերի: Արգելվում ե դարադից անապահով յեղած տնտեսությունը ներմուծել դարադի հանդես զգայուն անասուններ՝ առանց դրա համար անասնաբուժական մարմինների կամ տնտեսությունների պատասխանատու անձերի հատուկ թույլատվության: Յուրաքանչյուր տնտեսության մեջ, վորտեղ դարադ ե յերեվացել, հիվանդ անասուններին խնամելու համար, պետք ե առանձնացվեն առանձին անասնապահներ: Նրանք հիվանդներին խնամելու համար պետք ե ունենան հատուկ հագուստ և վոանաման: Վերջիններս աշխատանքից հետո պետք ե հանվեն և թողնվեն միևնույն շինության մեջ:

Հիվանդ անասունին խնամողները վոչ վոքին չպետք ե թողնեն առողջ անասունների շինության մեջ և իրենք չպետք ե գնան այլ ապահով անասնաբակերը: Ընդհանրապես կտրուկ կերպով պետք ե արգելվի կողմանակի մարդկանց մուտքը դարադից անապահով տնտեսության մեջ՝ կարանտինի ամբողջ ժամանակա ընթացում: Պետք ե միշտ հիշել, վոր դարադի վարակը շատ հեշտ կարելի յե-

տեղափոխվել ուրիշ տնտեսությունները՝ հագուստի, վորամանի և ձեռքերի միջոցով:

Յյուրաքանչյուր շինության մեջ, վորտեղ գտնվում են հիվանդ անասուններ, մուտքի մոտ՝ հենց դռների առաջ պետք ե լինի կոնք (գոգավոր ածան) ախտահանիչ հեղուկով (կծու նատրոնի յերկու տոկոսային լուծույթ) և լավ թրջված մի փորմալինի մեկ տոկոսային լուծույթ) և լավ թրջված մի փալասով՝ վոտքերը սրբելու համար: Այս շինության մեջ, վորտեղ գտնվում ե լվացարանը, պետք ե դրված լինի ձեռքերի ախտահանման համար ախտահանիչ հեղուկով լիք մի շիշ \*): Անասնապահները, կթողները և իրենք՝ անաս-



Նկ. 4. Պրոֆիլակտիկ դանա

նարուժական աշխատողներն ու ընդհանրապես բոլորը, վորոնց անհրաժեշտ ե լինում դարադից անապահով անասնաբակերը մտնել, պարտավոր հն մտնելու ժամանակ դոգնոց հագնել և ուժինե կոշիկներ (ծայրահեղ դեպքում՝

\*.) Ախտահանիչ հեղուկը՝ թե վոաքերը սրբելու և թե ձեռքերը լվանալու համար, պատրաստվում ե անասնաբուժի կամ անասնաբուժակի ցուցմունքով:

ռեալինե կրկնակոշիկներ), իսկ գուրս գալու ժամանակ՝ հանել և թողնել միենույն շինության մեջ. բացի դրանից, խնամքով լվանալ ախտահանիչ հեղուկով ձեռքերն ու վոտնամանները. Մահմանված կարանտինային ուժին ամենայն խստությամբ և մանրակրկիտ կերպով կիրառելու չեղաբում՝ հիվանդների հետ շփում ունեցող մարդիկ, այնուամենայնիվ, մեծ վտանգ են ներկայացնում դաբաղի առաջածման տեսակետից և դրա համար, նրանք անասնաբուժական հսկողության մշական վերահսկողության տակ պետք եւ գտնվեն:

Բացի անապահով վայրն ընդգրկող կարանտինային միջոցառումներից, ուույն անապահով վայրի շուրջը՝ 10—15 կիլոմետրի վրա՝ կարանտինի ներգործության ժամանակվա ընթացքում հաստատվում ե նաև այսպես կոչված նախազգուշական (պաշտպանողական) ողակալին գոտին. Այդպիսի նախազգուշական գոտին ծառայում ե իրքն մի պատվար, վորը պետք ե խոչընդուռ հանդիսանա անապահով վայրից առանալով վայրը դուռը գործելու դեմ՝ նախազգուշական գոտու հողամասի վրա անասնաբուժակուն հսկողության մարմինների ցուցումներով, կիրառվում են մասնակի կարանտինային (սահմանափակիչ) միջոցառումներ. Մասնավորապես նախազգուշական գոտու հողամասի վրա՝ կարանտինի ներգործության ամբողջ տեղության ընթացքում արգելվում են անասունի և անատանահաւաքութիւն ամեն տեսակի մթերումներ, անասուններին շռվարներ և բազարներ տանելլ, ինչպես նաև անասնապահական ցուցահանդեմներ կազմակերպելը. Արգելվում ե առանց անասնաբուժական հսկողության մարմինների թույլարվության ընդհանրապես անասուններին նախազգուշական գոտուց դուրս տանելլ: Սպանդանոցները, սառցարանները, կաթի գործարանները, պանրագործարանները, ինչպես նաև անասունի կաշվենումույթ մշակող գործարան-

ները այս ժամանակ պետք ե գտնվեն անասնաբուժա-սանի-տարական հսկողության հատուկ խիստ վերահսկողության տակ:

Կարանտինային միջոցառումները հենց անապահով վայրում միշտ կազմակերպելու դեպքում՝ դաբաղը կարող է բարեկարգ կազմակերպելու դեպքում: Հենց դրանով վերացվել յերեք չորս շաբաթվա ընթացքում: Հենց դրանով ել դաբաղի հետագա զարգացումը կարելի յե կասեցնել:

### ՊԱՏՎԱՌՈՒԽՄԵՐԻ ԴԱԲԱՂԻ ԳԵՄ

Պատվաստումները վարակիչ հիվանդությունների դեմ լայնորեն կիրառվում են թե անասնաբուժական և թե բժշկական պրակտիկայում: Դրա համար գործ են ածվում հատուկ բիոլոգիական պրեպարատներ՝ շիճուկներ և վակցիններ: Դրանք ունեն հատուկ ներգործություն, այսինքն՝ այդ պրեպարատներից յուրաքանչյուրը ներգործում ե միայն այն վարակիչ հիվանդության դեմ, վորի դեմ նա պատրաստված եւ: Դաբաղի վերաբերյալ այսպիսի բիոլոգիական պրեպարատներ, վորոնք գործնականում տային անթերի արդյունքներ, դիտության կողմից դեռևս չեն դանված:

ԽՍՀՄ-ում վերջին տարիներս՝ դաբաղի դեմ պայքարելու համար՝ կիրառվում ե իրքն վործ հակադաբաղային շիճուկ, սակայն նրա գործածությունը վոչ միշտ տալիս ե միատեսակ, հաստատուն հետեանքներ:

Այժմ հետազոտություններն ամբողջ ուշադրությունը դարձրել են դաբաղի դեմ վակցին ստանալու վրա՝ իրքն ամենից եժան և լավ հետեանքներ տվող բիոպրեպարատ:

### ԱՔՆԵՍՑԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Դաբաղի հանդեպ զգայուն անասունների արհեստական վարակումը կատարվում է անասնաբուժի կողմից միայն անասնաբուժական հսկողության վերադաս մարմինների

թուլլտվությամբ այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է արագ կերպով և միաժամանակ հիվանդացնել բորոք անսասուններին՝ դրանով համաճարակի ընթացքն արագացնելու և այդ ձեռվ կարանտինի ներգործության ժամկետը կարճացնելու համար։ Դա հնարավոր է, ինարկե, միայն այն ժամանակ, յերբ դաբաղը լավորակ ընթացք ունի և չի առաջացնի վոչ անկում և վոչ ել ծանր բարդություններ։ Նույնիսկ այդ պայմաններում արհեստական վարակումը պետք է համարել իբրև մի ծայրահեղ միջոց, վորից սոցիալիստական տնտեսության պայմաններում՝ պետք է ոգտվել խիստ զգուշությամբ։

Պետք է միշտ նկատի ունենալ, վոր դաբաղի վարակի միջոցով արհեստական վարակումը նույնքան վտանգավոր է, վորքան ընական վարակումը։

Դաբաղով հիվանդացած յուրաքանչյուր անսասուն արտադրում է, մանավանդ հիվանդության առաջին որերը,

#### Նկ. 5. Գոմաղըն անվասա դարձնելը

ահազին քանակությամբ վարակ՝ շինության մեջ, արոտավայրում և զրտ հետեամնքով ստեղծվում է դաբաղի վարակի կուտակման վտանգ։ Այդ կարող է դաբաղով հիվանդանալու վտանգավոր դեպքերի պատճառ դառնալ։ Այս պատճառով արհեստական կերպով վարակված անսասունների վերաբերյալ ևս պետք է կիրառվեն այնպիսի միջոցներ, վորպիսիք դաբաղով ընական կերպով վարակված յուրաքանչյուր անսասունի նկատմամբ են կիրառում։

Արհեստական վարակումը կարող է կատարվել միայն այն ժամանակ, յերբ անտեսությունը լիովին ապահովված է ախտահանիչ միջոցներով, յերբ կարելի յե կազմակերպել ընթացիկ ախտահանումը և գոմաղըն անվասա դարձնել։

Արհեստական վարակումը կատարում է անսամնաբուժը նույն նախրի դաբաղով հիվանդ անսասուններից վերցված

դաբաղի վարակով։ Դրա համար, հիվանդության սկզբում, մի քանի դլուխ խոշոր յեղյուրավոր անսասուններից հավաքվում է դաբաղի վարակը, ալտինքն՝ գեռ չպատոված դաբաղի բշտիկների պարունակած հեղուկը և պատերը։ Ապա այս հավաքված ամբողջ նյութը մանրացվում և արորվում է հախճապակյա սանդի մեջ։ Վրան ավելացվում ալկալիներ և թթուներ չպարունակող մաքուր պաղ ջուր։ Դաբաղի վարակն այս նպատակի համար կարելի յե վերցնել ամենաչնչին քանակությամբ, վորովինետեւ նրա 1:5 միլիոն և նույնիսկ 1:10 միլիոն լուծույթը կարող է վարակել դաբաղի հիվանդության յենթակա անսասուններին։ Անավարագ վարակի վարակության յենթակա անսասուններին։ Անավարակ, վարակ պարունակող այս հեղուկ «եմուլսիա» է, վոր ծառայում է իբրև նյութ արհեստական վարակման համար։ Խոշոր յեղյուրավոր անսասունի արհեստական վարակումը կատարվում է հետեւյալ ձևով։ Իբրին շրթունքի լորձաթակատարվում է նպանթի վրա հատուկ գործիքով (նշտարիչ) առաջացնում են վոչ խորը կտրվածքներ, քերծվածքներ և նրանց վրա միննույն գործիքով քսում են վարակիչ նյութը։ Վարակը քսելու համար կարելի յե վործածել վափուկ փոքր վրձին կամ ատամի խոզանակ։ Արհեստական վարակումից հետո, յերրորդ որն անսասուններին պետք է քննել համոզվելու համար, վոր վերցված վարակը բավարար չափով ակտիվ է յեղել և անսասունների հիվանդանալն ապահովված է։

Իբրև կանոն, արհեստական կերպով վարակված բոլոր անսասունները միաժամանակ հիվանդանում են, և հիվանդությունը 12—20 որվա ընթացքում վերջանում է։

Խոզերի արհեստական վարակման ժամանակ, դաբաղի վարակը քսում են նախապես նշտարած կնճիթի վերին մասի մակերեսի վրա։

Մատղաջներին արհեստական վարակման չպետք է մենթարկել, վորովինետեւ դաբաղը հաճախ մեծ կորուստ և պատճառում։

Այն բոլոր գեղինակներում, յերբ նիմք կա կտսկածելու, վոր կարող ե չարուակ դաբաղ տռաջտնալ, արմեսատկան վարակում չի քույլաւրփալ:

Այն տնտեսություններում, վորտեղ միաժամանակ պահպանվում են դաբաղի յենթակա մի քանի տեսակ անասուն (խոշոր յեղջուրավոր անասուններ, խոզեր, վոչխարներ), չպետք ե թույլ տալ, վոր անասունի մի տեսակից վարակի մյուսը, վորովհետև կարող ե տեղի ունենալ դաբաղի վարակի ուժեղացում: Սա իր հերթին կարող ե անասուններին ավելի ծանր կերպով հիվանդացնել և ամելացնել կորուսաթը: Դրա համար, անասուններին պետք ե առանձնացնել իրարից, այսինքն՝ յուրաքանչյուր տեսակի անասուն պահպանել և արածնցնել առանձին և նրանցից յուրաքանչյուրին ամրացնել հատուկ խնամող առձնակազմ:

Համաձարակի ընթացքն արագացնելու նպատակով, արհեստական վարակում կատարելու դեպքում՝ ընական վարակումից խուսափելու համար, բոլոր անասուններին միաժամանակ պետք ե վարակել:

### ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Դաբաղի վարակը, ինչպես արդեն հայտնի յե, շոտ իերկար ժամանակ կարող ե պահպանվել այն շինությունների մեջ, վորտեղ գտնվել են դաբաղով հիվանդ անասունները: Նա կարող ե պահպանվել ցամքարի, գոմաղբի, անասունների խնամելու իրերի վրա (մսուրներում, դույլերի, թիերի վրա և այլն), վորոնք վորոշ պայմաններում դաբաղի տարածման աղբյուր կարող են ծառայել: Այս պատճառով, ախտահանումը դաբաղի համաձարակի ժամանակ խիստ մեծ գործնական նշանակություն ունի:

Մսուրային պահպանման ժամանակ՝ անասունների դաբաղով հիվանդանալու դեպքում՝ այն շենքերում, վոր-

տեղ նրանք գտնվել են, ահազին քանակությամբ գաբաղի վարակ ե կուտակվում: Այդպիսի դեպքերում՝ անհրաժեշտ է կատարել ամենորդա, ընթացիկ ախտահանում՝ վարակի կուտակվումը պակսեցնելու համար: Յեկ նույնիսկ արոտակին պահպանման ժամանակ, ինը անասունը ցերեկն ուղարկվում ե արոտավայրը, իսկ գիշերը վերադառնում ե անասունաբակը, նույնպես անհրաժեշտ է շինություններն ախտահանել: Ամենից լավն ե, իհարկե, անասուններին հիվանդության ամբողջ տևողության ընթացքում թողնել արոտավայրում:

Բոլոր շինությունների իրերի վերջնական ախտահանումը կատարվում ե դաբաղի համաձարակը վերջանարկուց հետո:

Ախտահանումն սկսելուց առաջ, շինությունն ամենայն խնամքով պետք ե նախապես մաքրել գոմաղբից և ամեն տեսակի կեղտից, վորպեսզի ախտահանումն իր նպատակին համնի: Վերջապես, նույնիսկ շինությունները միայն մաքրելն անգամ (առանց ախտահանման) սանիտարական-առողջապահական մեծ նշանակություն ունի: Վերջնական ախտահանման նախապատրաստման ժամանակ, անպայման պետք ե խնամքով մաքրել գոմաղբը: Աղբանեղուկի հոռա-ման համար յեղած խողովակները, աղբանեղուկից և ամեն տեսակի կեղտից պիտի մաքրել: Մսուրները, դույլերը, թիերը, խոզանակները, քերիչները և անասունների խնամթիերը, խոզանակները պետք ե կեղտից մաքրել, նախքան ախտա-քի այլ իրերը պետք ե կեղտից մաքրել, նախքան ախտա-հանելը: Անասունների շենքի պատերը, գռները և առաս-տաղները նույնպես պետք ե մաքրվեն կեղտից և սար-դուստայնից: Սակավարժեք և անպետք փայտե իրերն ամե-գուստայնից: Սակավարժեք և անպետք փայտե իրերն ամե-նից լավ կլինի այրել: Յեթե անասունաբակում կամ խոզա-նոցում պատերը քարից կամ աղլուսից են կառուցված, այդ դեպքում՝ մաքրելուց և ախտահանելուց հետո՝ ան-պայման կրով պետք ե սպիտակացվեն: Շենքի մաքրումը

պետք ե կատարել հետևողականորեն. նախ մաքրում են առաստաղներն ու պատերը, և ապա հատակները, գոները, սարքավորման իրերը: Լվանալու համար հանձնարարվում ե գործածել տաք ջուր և սապոն (100 լիտր տաք ջրի համար պետք ե վերցնել 3 կգ կանաչ սապոն) կամ ծայրահեղ դեղքում՝ 70 աստիճանից վոչ պակաս տաք ջուր: Բոլոր շենքերը և անասունների խնամքի իրերը մաքրելուց հետո միայն պետք ե անցնել խակական ախտահանմանը: Ախտահանման համար պետք ե վերցնել կծու նատրոնի յերկու տոկոսային լուծույթ, վորն լուրաքանչյուր անդամ պետք ե պատրաստել ըստ կարիքի (նախապես չպետք ե պատրաստել): Կծու նատրոնի փոխարեն կարելի լին վերցնել ֆորմալինի մեկ տոկոսային լուծույթ: Լուծույթի քանակը պատրաստվում ե հետեւյալ հաշվով՝ մեկ քառակուսի մետր տարածության համար մեկ լիտր լուծույթ: Կծու նատրոնով ախտահանելու ժամանակ, յուրաքանչյուր 10 լիտր լուծույթի վրա ավելացվում ե նաև 5 կգ կիր: Հավաքված ջրերն ախտահանելուց հետո, պետք ե հեռացվեն հոսող հեղուկների համար շինված խողովակների միջոցով և հավաքվեն աղբափոսերի մեջ:

Ախտահանման ժամանակ բոլոր անասունները շինությունից պետք ե դուրս հանվեն: Ախտահանումից հետո՝ պետք ե բաց անել գոները, պատուհանները և ողափոխչավ շինությունը հիմնավորապես ողափոխելու: Ախտահանման պետք ե յենթարկվեն նաև անասունները:

Բուրդն ու կաշին պետք ե նախապես կեղտից մաքրել, իսկ ապա լվանալ կամ շփել մեկ տոկոսային կծու նատրոնի լուծույթով: Անասունների պճեղները պետք ե մաքրել և լվանալ ախտահանիչ լուծույթով:


Միայն ալոպես մանրակրկիտ կերպով մաքրելուց ու ախտահանելուց հետո, կարելի յե համոզված լինել, վոր դարադի վարակը վոչնչացված ե:

## ԳՈՐԾՎԱՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

Գոմաղբի ախտահանման (անվաս դարձնելու) ամենահասարակ և մատչելի յեղանակը բիոտերմիկ յեղանակն է: Դա հիմնված է գոմաղբի փոման պրոցեսների վրա, վարի ընթացքում առաջանում ե բարձր ջերմություն (մինչեւ 60 աստիճան Յել-սի): Այս ախտահանման ժամանակ, դարբադի վարակը վոչնչանում ե բավական արագ կերպով:

Գոմաղբը համապատասխան ձևով դիղելուց յերեք շաբաթ հետո, այս կարելի յե լրիվ կերպով ախտահանված համարել:

Այն շենքերում, վորտեղ գանգել ե դաբաղով հիվանդ անասունն, գոմաղբը դուրս ե տարվում այնպիսի մի տեղ,



վորն ազատ ե անասունների մուտք գործելուց և դիղվում ե հետեւյալ ձևով. զետնի մակերեսի վրա փռում են չոր ծղոտի մի շերտ՝ 25 սանտիմետր հաստությամբ, մեկ ու կեսից մինչեւ յերկու մետր լայնությամբ և ապա գոմաղբը՝ մեկ ու մի քառորդ մետր բարձրությամբ: Գոմաղբի դեղը վերևից ծածկում են 10 սանտիմետր հաստությամբ չոր ծղոտի շերտով (և ապա նույնքան հաստությամբ ավագի շերտով—Ռ. Ա.):

Գոմաղըն այսպես դիզելն ամենալավ հետեանքներ ետալիս և վաղուց կիրառվում եւ իբրև մի գործնական միջոցառում վոչ միայն դաբաղի, այլև ուրիշ վարակիչ հիվանդությունների գեմ պարաբելու գործում:

Անասնաբակերի աղբահեղուկը պետք եւ լցնել աղբահեղուկի փակ փոսերի (աղբահեղուկի ընդունաբանների) մեջ, փորտեղ դաբաղի վարակը՝ փտումի և ամիակի կուտակման պրացեսների ազդեցության տակ՝ 2—4 շաբաթվա ընթացքում վոչնչանում եւ ձմեռը փտման այս պրացեսները մի քիչ դանդաղում են և յերբեմն դաբաղի վարակը կարող եւ պահպանվել բավական ավելի յերկար:

### ԿԱՇՎԵՀՈՒՄՈՒՅԹԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի դաբաղի ինստիտուտում վերջերս մշակված եւ դաբաղով վարակված կաշվեհումույթի ախտահանման մի նոր լեզանակ: Այս լեզանակը պարզ եւ մեծ նյութական ծախսեր չի պահանջում, իսկ ամենազլիսավորը՝ կաշին այս լեզանակով մշակելը ամենափափառ նույնում պատրաստի նյութի (ֆաբրիկատի) վրա:

Կաշվեհումույթի ախտահանման համար գործածվում է հետեւյալ լուծույթներից մեկը. կծու նատրոնի լուծույթը՝ հագեցած աղային լուծույթի մեջ (2 գրամ կծու նատրոն մեկ լիտր հագեցած աղային լուծույթի մեջ), կամ բիսուլֆիտի լուծույթը՝ հագեցած աղային լուծույթի մեջ (5 գր. բիսուլֆիտ՝ մեկ լիտր հագեցած աղային լուծույթի մեջ), կամ, վերջապես, սոդայի ածխատի լուծույթը՝ հագեցած աղային լուծույթի մեջ (50 գր սոդայի ածխատ՝ մեկ լիտր հագեցած աղային լուծույթի մեջ):

Կաշվեհումույթի ախտահանման այս նոր լեզանակը խորհրդային անասնաբուժական գիտության մի մեծ նվաճումն եւ:

### ՄԻջնօթութիւնները ԴԱԲԱՂԻ ԴԵՄ ԳԱՐԱԱՆԱՑԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Գարնան, իբրև ընդհանուր կանոն, անասունի որդանիզմն ամենից ավելի զգայուն և ամեն տեսակ հիվանդությունների հանդեպ:

Դաբաղի բոնկումները գարնանացան կամպանիայի շրջանում հաճախ ծագում են «Ճմեռային խաղաղություն» ից հետո: Դա տեղի լի ունենում այնտեղ, վորտեղ ձմեռային պահպանման անցնելուց առաջ, հակադաբաղային միջոցառումները մինչև վերջը չեն տարվել և չեն ամրապնդվել համապատասխան ձեռք: Բոնկումները կարող են ծագել նաև ուրիշ տեղից՝ դաբաղից անապահով վայրից բերված դաբաղի միջոցով:

Առաջին դեպքում, այսինքն՝ յերբ այս կամ այն գյուղխորհրդում կամ շրջանում դաբաղը մնացել եւ մինչև աշուն, անասուններին արոտավայր ուղարկելու նախորյակին՝ պետք եւ կատարել դաբաղից անապահով կամ սպառնալիքի տակ գտնվող վայրերի բոլոր անտեսությունների, անասնաբուժական ամենապաշտիք հետազոտություն՝ դաբաղի բոլոր ոջախները հայտաբերելու համար: Յեզ նույնիսկ այն դեպքում, յերբ այն անտեսությունները, վորոնք յեղել ելին անապահով կամ գտնվել եյին վարակման սպառնալիքի տակ՝ նախքան անասունների ձմեռային պահպանման անցնելը, և գարնանը՝ հետազոտության ժամանակ ապահով են ձանաչվել, անհրաժեշտ եւ այդ անտեսություններն ու նրանց նախիլներն, առնվազն յերկու շաբաթ, լինթարկել հատուկ պրոֆիլակտիկ ուժիմի: Հետեաբար, բոլոր անտեսությունների վրա պետք եւ տարածել այն բոլոր սահմանափակիչ միջոցառումները, վորոնք նախատեսված են պրոֆիլակտիկ ողակային պաշտպանողական գոտինների համար: Միայն գրանից հետո կարելի լի վստահ լինել, թե տվյալ վայրում դաբաղը վերացված եւ:

Այն բոլոր շինանյութերը, վորտեղ գտնվել են դաբաղով հիվանդացած անսասուններ, արոտավայր ուղարկելուց առաջ, գոմաղբից և կեղտից խնամքով պետք ե մաքրվեն և ախտահանվեն կծու նատրոնի լերկու տոկոսային լուծույթով կամ ֆորմալինի մեկ տոկոսային լուծույթով։ Գոմաղբը պետք ե տարգի աճնպիսի տեղեր, վորոնք պաշտպանված են դաբաղի հանդեպ զգայուն անսասունների շիռմից և դաբաղի դեղերով՝ անվաս դարձնելու համար։ Անսասուններին արոտավայրը ուղարկելու հենց նախորյակին, նրանց կաշին ամենայն խնամքով մեխանիկական մաքըրման պետք ե լենթարկել, պճեղները մաքրելու ախտահանել կծու նատրոնի մեկ տոկոսային լուծույթով։

## ԴԱԲԱՂԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Դաբաղի բուժումը գլխավորապես հիմնված է ախտահանիչ լուծույթների կիրառման վրա, ինչպես նաև հիվանդ անսասունների պահպանման նպաստավոր պայմաններ ստեղծելու վրա։ Եինությունը պետք ե լինի ընդարձակ, լուսավոր, ունենա թարմ ողի մշտական հոսանք և թարմ, չոր, մաքուր ու առատ ցամքար։ Ամրանը՝ լավ լեղանակին ամբողջ նախիրն ավելի լավ ե թողնել արոտավայրում՝ դաբաղով հիվանդանալու ամբողջ ժամանակվանթացը։

Կերը պետք ե լինի փափուկ և սննդարար։ Այդպիսի դեպքերում՝ ամենից լավ ե տալ կանաչ կեր՝ թեփ կամ ալյուր խառնած։ Անսասուններին պետք ե ջրել թարմ ու մաքուր ջրով։

Բերանի խոռոչն ուժեղ չափով վարակվելու դեպքում՝ կարելի յե գործածել կալիոնի մարդանատի կամ քացախաթթվի (ըստ անասնաբուժի ցուցումի) ախտահանիչ և չորացուցիչ լուծույթներ։ Միևնույն նպատակով կարելի յե չորացուցիչ լուծույթներ։

պարզապես վերցնել ոռվորական խոհանոցի աղի թեթև լուծույթ (0,85—1 տոկոսային)։

Պձեղները հիվանդանալու դեպքում՝ ամենից առաջ մաքուր պետք ե պահել վերջավորությունները, բացի վերոհիշյաներից, կիրառվում են հանրության մեջ ամենագործածական դարձած ախտահանիչ լուծույթները՝ ոծանելիքները, վորշիները (ըստ անասնաբուժի ցուցումի)։

Կուրծի հիվանդանալու դեպքում՝ պետք ե մաքուր պահել այն, որական յերեք-չորս անգամ լվանալ զաղջ (գոլ) ջրով կամ ավելի լավ ե բորաթթվի 2—3 տոկոսային լուծույթով։ Սրա փոխարեն կարելի յե պարզապես վերցնել բորաթթվի ոծանելիք կամ բորաթթվի վազելին։ Կուրծը վորքան կարելի յե հաճախակի պետք ե կթեր։

## ԴԱԲԱՂԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Դաբաղի վերաբերյալ պրոֆիլակտիկ (նախազգուշական) միջոցառութները պետք ե սկսվեն անսամբլակի և արոտավայրի պաշտպանությունից։

Հայտնի յե, վոր դաբաղն ամենից շուտ և ամենից հետ կերպով կարող ե բերվել տնտեսության մեջ, յեթե ալդ տնտեսությունը շփվում ե դաբաղից անապահով տընտեսությունների հետ՝ սահմանակից արոտավայրերի, ընդհանուր ջրարբի, ընդհանուր ճանապարհների, մարդկանց, վորոնք լերթնեկում են մի տնտեսությունից մլուսը, և ալլ բաների հետ։ Դաբաղը կարող ե բերվել նախը համարման ժամանակ, յեթե անսասունը բերվել ե ալն վալրից, վորտեղ դաբաղի համաճարակ ե յեղել։

Դաբաղը կարող ե բերվել կերերի հետ միասին, յեթե մթերված են դաբաղով վարակված վայրերում։

Դաբաղը կարող ե բերվել կողմնակի մարդկանց միջոցով, դրա համար ել նրանց մուտքը տնտեսության մեջ հսկողության տակ պիտի առնել։

Յերբ դաբաղը բռնկվում է այն շրջանում, ուր գտնը-վում և տնտեսությունը, հիվանդության ուռուք գործելու ամենա իոքը վտանգի զոյության դեպքում անդամ, պետք է անմիջապես կիրառել ախպիսի նախադգուշական ռեժիմ (հարկադիր նախադգուշական կարանտին), վորը միանդամայն բացառի այդ հնարավորությունը:

Դրա համար հիվանդության ամբողջ տեսողության ընթացքում, պետք է առանձնացնել և ամրացնել փորոշ արոտավայրեր ու ջրարրներ, վորտեղ չպետք է մուտք գործեն մրւու տնտեսությունների անասունները։ Յեթե տնտեսության հողամասի վրա գտնվում են ընդհանուր ճանապարհներ, այդ դեպքում՝ համաձարակի տեսողության ամբողջ ժամանակվա ընթացքում՝ պետք է փակել ճանապարհները և սահմանել համապատասխան վերահսկողություն, արգելելով ամեն տեսակի անասունների մուտքը։ Թեկող ապահով, բայց սպառնալիքի տակ գտնվող հողամասում յեղած տնտեսությունների անասունների միջև բեղմնավորումը նույնպես մեծ վտանգ է ներկայացնում և չպիտի թուլատրել այն առանց անասնաբուժական վերահսկչի թուլատվության։ Նախադգուշական կարանտինի ամբողջ տեսողության ընթացքում՝ պետք է սահմանափակել անասնաբակերի և խողանոցների մուտքը, կցելով այդ գործին հատուկ անասնապահներ և կթողներ, վորոնք լավ ժանոթ պիտի լինեն պրոֆիլակտիկ ռեժիմի կանոններին։

Անմիջապես պետք է արգելել կողմնակի անձանց մուտքը վոչ միայն անասնաբակերն ու խողանոցները, այլև ընդհանրապես տնտեսության հողամասը։ Դաբաղի համաձարակի ամբողջ տեսողության ընթացքում՝ պետք է արգելել ապահով տնտեսության մարդկանց շփումն՝ անապահով տնտեսության մեջ գտնված մարդկանց հետ և արդ բանի վրա սահմանել ամենախիստ վերահսկողություն։

Նոր յեղած վորեւ անասուն պետք է պահպի ընդհա-

նուր նախըից առանձին մեկուսացված շինության մեջ կամ կարանտինային բացությա գոմում, մինչև չփորոշվի, վոր անասունը բոլորովին առողջ է և կարող է մտցվել նախըի մեջ՝ առանց վորեւ վտանգի։ Սյդպիսի նախազգուշական կարանտինի ժամկետը՝ վարակիչ հիվանդությունների համար՝ սահմանված է 14 որ։

Տնտեսություն բերված ամեն մի անասուն պետք է ունենա վկայական այն մասին, վոր նա բերված է վարակիչ հիվանդություններից վաղորոք հայտնի ապահով վալրից։ Անասնաբուժական հակչի կողմից տրված ալղակիսի վկայական լինելու դեպքում՝ միևնուն ե, նախադգուշական կարանտինը պարտադիր է բոլոր տնտեսությունների համար։

Մեծածավալ ու կոշտ կերերը չպիտի դուրս տարվեն այն վալրերից, վորտեղ լեղել ե դաբաղի համաձարակ, առնվազն յերեք ամսվա ընթացքում՝ հաշվելով հիվանդության վերջանալու որից։ Տնտեսության մեջ անծանոթ կամ կասկածելի ծաղում ունեցող կերեր բերվելու դեպքում՝ յերեք այդ կերից միանդամից բոլոր անասուններին չպետք է տալ։ Պետք է առանձնայնել սակավարժեք անասունների մի փոքր խումբ և 12—14 որվա ընթացքում կատարել փորձնական կերակրում, վորպեսզի դրանով վերացնենք այս կամ այն վարակիչ հիվանդության և մասնագորապես դաբաղի մուտքի վորեւ վտանգը՝ կերի միջոցով։

ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի դաբաղային ինստիտուտում հաստատված ե, վոր սիլոսացման ժամանակ դաբաղի վարակը վոչնչանում ե։ Այս տվյալները պետք ե ոգտագործել, յերբ կերերի միջոցով դաբաղ հիվանդության մուտքի վտանգ կա։

Դաբաղը կարող է բերվել դաբաղով հիվանդ մորթված անասունների մսի միջոցով։ Սյդպիսի դեպքերում՝ առանձին վտանգ են ներկայացնում սառեցրած միսը և

վարակված մասերը (վերջավորություններ, լեզուն, կուրծ): Դրա համար ել առանց անասնաբուժական հսկողության թույլտվութան պետք ե խուսափել դաբաղի համաճարակների ժամանակական վարակված միս գներ:

Դաբաղով հիվանդ անասուններին սպանդանոցներում հարկադրաբար մորթելու դեպքում՝ նրանց միսը թույլ ե տրվում գործածել կամ հանձնել սառցարան միայն առնվազն 24 ժամվա ընթացքում՝ 8—10 աստիճան ջերմության մեջ պահելուց հետո: Այդպիսի անասունների կաշիները սպանդանոցից կարող են բաց թողնվել միայն ախտահանելուց հետո:

Անասուններին սովորական ճանապարհներով, յերկաթուղով և շոգենավերով տեղափոխելիս, ճանապարհին ամեն մի կանգ առնելու վայրում՝ վորոշ և հատուկ տեղերում անասնաբուժական հսկողության տակ պիտի կատարվի նրանց կերակրումը և ջրումը:

Անասուններ բարձելու ժամանակ պետք ե պահանջել ախտահանված վագոններ, վերջիններս պետք ե ունենան համապատասխան փաստաթուղթ կամ ախտահանման-վացման կայարանի կապարակնիքով կնքված լինեն:

Անասնաբուժա-սանիտարական վերահսկողության տեսակետից, առանձին ուշադրություն պետք ե դարձնել անասունների կուտակման վայրերի և մորթելու (անասնահրապարակներ, անասնահավաքատեղիներ, սպանդանոցներ և սպանդավայրեր), սսամթեքների ու կաթնամթերքների պահպանման և վերամշակման տեղերի վրա, բրդի ու կաշվերումույթի մշակման գործարանների վրա: Տարին առնվազն յերկու անգամ պետք ե ախտահանել անասնաբակերն ու խոզանոցները, ինչպես նաև պարբերաբար ժաքը և ախտահանել այն բոլոր շինությունները, գործնք հում անասնամթերքի մշակման հետ գործ ունեն:

Եեվ, վերջապես, նախազգուշական նշանակություն ունեն նաև անասունների ինսամբի ու պահպանման լավ պայմաններն ու նրանց կանոնավոր ոգտագործումը:

ԿԱԹԻ ՈՒ ՄՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱԲՈՂԻ ԺԱՄԱՆԱԿ

Դաբաղի համաճարակների ժամանակ կաթը չպետք ե անտեսության սահմաններից դուրս տանել, այլ պետք ե ոգտագործել հենց տեղում՝ յեռացած վիճակում և ամ պետք ե վերամշակվի կաթնաթթվային արտադրանքների ձևով: Կաթը պիտի դուրս տարվի կարանտինի վերանալուց հետո միայն:


Ամբողջ կաթը, անկախ այն բանից, թե դաբաղով հիվանդանալու վոր շրջանումն ե կովից վերցված, պետք ե համարվի վատանգավոր և յենթարկվի սանիտարական պարագարի նախազգուշական մշակման (յեռացում, պաստերացում, կաթնաթթվային մթերքների պատրաստում): Կաթն անվաս դարձնելու համար, կարելի է այն տաքացնել 10—15 ըոպե 8-սի 70 աստիճանից վոչ-պակաս: Կաթը յեռացնելիս, վայրկենապես սպանվում ե դաբաղի վարակը: Կաթը թթվելու ժամանակ դաբաղի վարակը նույնպես բավական արագ վոչնչանում է: Դրա համար, թթու սերից պատրաստված լուղն ու պանիրն այլևս վտանգ չեն ներկայացնում:

Հիվանդության առաջին որերին մորթված անասունների միսը կարող ե դաբաղի վարակ պարունակել: Այդ միսն ուտելու համար պետք ե գործածել միայն լրիվ լեփված կամ լավ խորոված վիճակում: Հիվանդ ու կասկածելի անասունները՝ մեծ պարտիաներով մաս համար հարկադրաբար մորթելու դեպքում՝ ավելի լավ ե այդ անասունների միսը վերամշակել իբրև պահածո և լերշիկ: Վարակված մասերը, որինակ՝ զլուխն ու վերջավորությունները, պետք ե անվաս դարձվեն բարձր ջերմության ազդեցության տակ:

## ՄԱՐԴՈՒ ԴԱԲԱՂԸ

Դաբաղի համաձարակների ժամանակ, մարդը գաբազով վարակվում է սովորաբար դաբաղով հիվանդ կովերի հում կաթը գործածելիս։ Ավելի հաճախ դա լինում է լերեխաներին հում կաթով կերակրելու ժամանակ։ Կարելի է նույնպես վարակվել դաբաղով հիվանդ անատունն ընդ խնամելու դեպքում (անասնապահներ, կթողներ)։

Հասակավոր մարդկանց մոտ դաբաղն այնպես է, ինչպես անասունների մոտ. մարդը վարակվում է բերանի խոռոչից, բայց հաճախ վարակը յերեսում է նաև ձևոների և վոտների վրա։



Նկ. 7. Մարդու դաբաղ

Յերեխաների դաբաղն ավելի հաճախ հանդես է գալիս ուժեղ փորլուծի ձևով, փորը ցույց է տալիս թե վարակվել են ստամոքսն ու աղիքները։

Մարդկանց դաբաղի դաղտնի շրջանը տևում է 2-ից մինչև 6 որ։ Աղղբնական բշտիկները զարդանում են դաբաղի հարուցիչի մուտք դործած տեղում, կամ բերանի

խոռոչում. այն ժամանակ յերկրորդական բշտիկները կարող են յերեսն գալ ձևոների և վոտների վրա՝ մատների արանքում։ Հիվանդության ժամանակը չերմությունը խիստ բարձրանում է, առաջ է գալիս ընկճված դրություն, մկանների կտրտուք ու ցավեր, սաստիկ նիհարում և ուժասպառություն։ Հիվանդությունը տևում է կարճ (6—10 որ), յեթե ընթանում է առանց վորեւ բարդությունների։ Յերեխաների դաբաղը զգալիորեն ծանր է լինում, քան հասակավորներինը։ Ստամոքսի և աղիքների վարակման դեպքում՝ դաբաղին գուգընթաց, բարձրանալ է չերմությունը, նկատվում է սրտխանություն և փսխում։ Յերեխաները հաճախ դաբաղից մահանում են։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դաբաղը վարակիչ հիվանդություն ե . . . . .	3
2. Վնր անասուններն են հիվանդանում դաբաղով . . . . .	4
3. Դաբաղի հարուցիչը . . . . .	5
4. Վարակի մուտքն անասունների որդանիզմի մեջ . . . . .	8
5. Դաբաղի տարածումը . . . . .	9
6. Դաբաղի նշանները . . . . .	13
7. Միջոցառությունները դաբաղի դեմ . . . . .	20
8. Պատվաստությունները դաբաղի դեմ . . . . .	25
9. Արհեստական վարակում . . . . .	25
10. Շինությունների ախտահանումը . . . . .	28
11. Գոմաղբի ախտահանումը . . . . .	31
12. Կաշվենումույթի ախտահանումը . . . . .	32
13. Միջոցառությունները դաբաղի դեմ՝ զարնանացան կամպանիայի շրջանում . . . . .	33
14. Դաբաղի բուժումը . . . . .	34
15. Դաբաղի պրոֆիլակտիկան . . . . .	35
16. Կաթի ու մսի գործածությունը դաբաղի ժամանակ . . . . .	39
17. Մարդու դաբաղը . . . . .	40

8867

ԳԻՒԲ 40 ԿՈՊ.



Библиотека колхозника и рабочего совхоза

Проф. А. Л. Скоморохов

ЯЩУР  
и барбасним

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЭРИВАНЬ